№ 5. Կիրակի, ապրիլի 10—1866. № 5.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

թիֆլիսի առևտրական գազետ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ դինը Մարտիցը մինչև Յունվարը քաղաքումս՝ 2 մանեթ 50 կոպ., դուրսը՝ 3 մանեթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազետին ստորագրվիլ կարելի է խմբագրողի մօտ:
Գազետումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գնեի մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Ապրիլի 4-ը: Միխայել Նիկոլայեվիչի 2000 մ. շնորհելը: Ծառայողների փոխոխութիւնները: Տորդերը: Պետերբուրգի Սենատումը Մարտի 10-ին Կովկասին վերաբերած քննելու գործերը: Թուխանի վայրացանն առ հասարակ եւ մասնաւորապէս Կովկասինը: Փոթին 1864 եւ 1865 թվին: Քահանաների արարմունքներից մէկ քանիսը: Առևտրական տեղեկութիւններ:

ԱՊՐԻԼԻ ՁՈՐՍԸ:

ԲԱՐՈՆ ՆԻԿՈԼԱՅՈՒ անունով Ապրիլի 5-ին ստացած դեպեշան Պետերբուրգից:

«Ապրիլի 4-ին կէսօրից յետոյ սահաթի 4-ին Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր կեանքը փորձանքի տակն էր ընկնում: Թագաւոր Կայսրը Լեռնի Սադ կոչված այգումը մանդալուց յետոյ ուզում էր նստել իր կառեթումը: Եդ ժամանակը Թոլից գոյեց մէկը Թագաւորի վրայ, բայց Նախախնամութիւնը պահպանեց Նորին Մեծութենի թանկագին կեանքը: Երբ որ չարագործը մտնում էր Թագաւորի կառեթին, էդտեղ ժողովրդի մէջ մէկ դիւղացի տղայ Օսեի Կոմիսարով անունով, որն որ Կոստրոմի գաւառիցն է, էդ բանը նկատելով սկսեց նրան հետևիլ: Թագաւորի վերարկուն ծածկելիս մոտկացաւ չարագործը կառեթին, հանեց իր պալտոի տակից թոփն ու դցում էր Թագաւորի վրայ: Կոմիսարովը շուտով խլեց չարագործի կռանը, նրա ձեռը բարձրացաւ, թոփը տրաքեցաւ, բայց Աստուծու ողորմութենով չդիպաւ Թագաւորին: Չարագործը ջահել տղայ է, սրան իսկոյն բռնեցին: Գործը քննվում է: Կոմիսարովին Թագաւոր Կայսրը շնորհեց ժառանգական ազնուութիւն»:

Էս դեպեշան ստացվեցաւ Թիֆլիսումը Ապրիլի 4 ին երեկոյեան: Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ Կովկասի փոխարքան Թիֆլիսումը Սիոնի մայր եկեղեցումը գտնվեցաւ միւս օրը Ապրիլի 5 ին առաւօտեան քաղաքիս բոլոր աստիճանաւորների և ժողովրդի հետ, ինչտեղ որ Վրաստանի Եկեղեցոը մոլեբին կատարեց Թագաւորի փորձանքից ազատվելու պատճառով: ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ մի և նոյն օրը տելեգրաֆով իմաց արաւ էս բանը Քութայիս, Երևան, Վլադիկավկազ, Սաավրոպոլ և Եկատերինոդար: Թիֆլիսի բոլոր եկեղեցերումը և մեչիթներումը շնորհակալութիւն վեր առաքվեցաւ Աստուծուն՝ Թագաւորի ազատվելու համար: Կովկասի փոխարքայ Մեծ իշխանը էս դեպեշան գրեց Թագաւորին՝

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐԸ

Պետերբուրգ:

«Սիոնի մայր եկեղեցումը Աստուծուն շնորհակալութիւն վեռ առաքելուցը յետոյ բաղդաւորութիւն ունիմ յայտնել Ձեր ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵՆԻՆ Կովկասի զօրքի, բոլոր բնակիչների ամենահպատակօրէն հաւատարմութիւնը և դէպի Աստուած վեր առաքած շնորհակալութիւնը, որ նա պահպանեց հրաշալի կերպով Ձեր Թանկագին օրերը Ռուսաստանի և նրա բոլոր բնակիչների բարօրութենի և բաղդաւորութենի համար: Էսօր շնորհակալութենի մոլեբիներ կատարվեցաւ Ստավրոպոլումը, Եկատերինոդար, Վլադիկավկազ, Քութայիս և Երևան: Ամենքան իր կարգին է»:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐԸ պատասխան տվեց նրանանպէս էս դեպեշայով:

ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԵԼ ՆԻԿՈԼԱԵՎԻՉԻՆ

Թիֆլիս:

«Սրտանց շնորհակալ եմ իմ վառաւոր Կովկասի զօրքիցը և Կովկասի բոլոր բնակիչներիցը՝ էլի նոր իրանց հաւատարմութիւնը ցոյց տալու համար: Ընդհանուր սրտակցութիւնը խորը շարժում է մեզ»:

Էդ անցքի պատահելիս Թագաւորի մոտ էլած ժողովուրդը քիչ էր մնում չարագործին տեղն ու տեղը սպանում էր, բայց Թագաւորը չթողեց ժողովրդին:

Նորին Կայսերական Բարձրութիւն Միխայել Նիկոլայեվիչը Ապրիլի 1-ին Օլդա Ֆեոդորովնային արու զաւակ լինելու պատճառով շնորհեց Թիֆլիսի ամենախեղճ բնակիչներին 2000 մ. բաժանելու Թիֆլիսի Գենեբալ Գուբերնատորի ձեռով:

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

1866 թվի Մարտի 4-ին:

Գորիդորեցկի երկրագործական Ինստիտուտիցը Այրոնոմի կանդիդատի աստիճանով կուրսն

աւարտած Ալէքսանդր ՎԱՐԴԱՆԵԱՆՑԸ նշանակվեցաւ Թագաւորական Կալուածքների Դեպարտամենտումը անպաշտօն ծառայող։

Բժիշկ Յովհաննէս ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԸ նշանակվեցաւ Սալիանու հիւանդանոցի բժիշկ։

Սալիանու հիւանդանոցի բժիշկ, Տիտուլիարնի Սովեանիկ ՎԱԽՐԱՄԵԱՆՑԸ նշանակվեցաւ Լենքորանի նահանգական բժիշկ։

1866 թ. Մարտի 18-ին։

Նախիջևանի նահանգական ուսումնարանի Պատուաւոր Վերատեսուչ հաստատվեցաւ Պետերբուրգի 1 գիլդի վաճառական պատուաւոր քաղաքացի Յարութիւն ՍԱՐԳՍԵԱՆՑԸ։

Արձակվեցաւ ծառայութենից Էջմիածնի Նահանգական Կառաւարութենումը 10 դ կարգի աստիճանաւոր Գուբերնսկի Սեկրետար ՄԵԼԻՔ—ՎԱՐԴԱՆԵԱՆՑԸ։

1866—Մարտի 27-ին։

Գեներալ-Մաեոր ԼԱԶԱՐԵԱՆԸ ստացաւ Գեներալ—Լեյտենանտի աստիճան։

Մարտի 30-ին։

Թագաւորական Կալուածքների Դեպարտամենտի կրտսեր ուղղագրող (մշադչի ստոլոնաչալնիկ) Նազարի Սովեանիկ ԽԱՏԻՍԵԱՆԸ 7-դ Մեժելոյ կոմիսիայումը դատաստանական (սուդեբնի) անդամ նշանակվեցաւ։

Ապրիլի 1-ին։

Ստատսկի Սովեանիկ ԱԼԻԽԱՆԵԱՆՑԸ նշանակվեցաւ Կովկասի Փոչտի Օկրուգի Կառավարութենի գլխաւորի օգնական։

ՏՈՐԳԵՐ։

Կովկասումը տրանզիտով ճանապարհներ չինելու համար սարգած Կոմիտետը յայտնում է, որ պէտք է էս տարի փոդրաթով տվվի Թիֆլիսից մինչև Կրասնի Մոստ (Երևանու ճանապարհի վրայ) շոսսէի չինելը։ Ճանապարհի երկարութիւնն է 49 վերս և 467 սաժէն։ Էդ ճանապարհի չինելու համար նշանակած է 270,139 մ. 76 ու կէս կ. Էս փոդրաթի վրա առնել ցանկացողները պէտք է յայտնեն իրանց միտքը Կոմիտետին մինչև Ապրիլի 20-ը։

Ճանապարհների 8-դ Օկրուգի Կառաւարութիւնը յայտնում է, որ Ապրիլի 18-ին պէտք է լինի Անանուրի շոսսէի վրայ կարմունջ, կաւէ խողովակներ (տրուբէք) և քարէ տեփուրներ փոդրաթով տալու տորգը։

Կովկասի Ինտենդանտի Կառավարութենումը Ապրիլի 21-ին նշանակած է Կովկասի բերդի Արտիլերիի ուսումնարանի համար 70 սաժէն փէտ հասցնելու տորգը։

Կովկասի Ինժիների Կառավարութենումը Ապրիլի 14-ին նշանակած է Արտիլերիի ուսումնարանի տանչինելու տորգը։

Պրիկազումը Ապրիլի 24-ին նշանակած է Կոլեժսկի Սովետնիկ Ալէքսանդր Բելիցկու ժառանգների Կուվիումը գտնված տան ծախելու տորգը։ Էս տան Պրիկազի պարագին է 3000 մ։

Մարտի 10-ին։

Պետերբուրգի Սենատի Մեժելոյ Դեպարտամենտումը նշանակած էր քննելու միւս գործերի հետ և Կովկասին վերաբերած էս գործերը՝

1.) Վաճառական Ղամազեանցի և Մանանեանցի փողի հաշիւների մասին։

2.) Էջմիածնի Վանքի Սաղմոսավանք գիւղի մանաւոր մարդքանցից դաւի տալու մասին։

ԹԻՖԼԻՍ

Ապրիլի 9-1866։

Հիմի երբ որ մեր երկրումը մէկ կողմից շինվում են թէ երկաթէ և թէ շոսսէի ճանապարհներ և միւս կողմից սա պատրաստվում է առևտրական աշխարհումը նշանաւոր տեղ բռնել, մեզ վրայ մեծ պարտականութիւն կայ ուշք դարձնելու ոչ թէ միայն էն բերքերի վրայ, որ տալիս է մեզ մինչև էսօր մեր հողը, այլ և էն բերքերի վրայ, որ կարող է տալ մեզ հողը։ Ուշադրութիւն դարձնելով մեր երկրի մէջ առաջացնելու բերքերի վրայ, միւս բոյսերի հետ աշխարհս տակն է ընկնում և թութունը։

Յայտնի է, որ թութունի գործածութիւնը սարէ ցտարի ամեն երկիրներումը աւելանում է զարմանալի կերպով և թութունի առուտուրն էլ էդ պատճառով մեծ նշանակութիւն է ստանում։ Ֆրանսիայումը միջին հաշով ամեն մէկ բնակիչի վրայ 7¼ ֆունտ թութուն է գալիս։ Էդպիսի ահագին գործածելու հետևանքն էն է, որ հիմի ոչ թէ միայն շատ թութուն է ցանվում ամեն տեղ, այլ հետևուհետը մեծ գին էլ է բռնում։

Ամերիկայի Միացած Նահանգներումը վերջին պատերազմի սկվելուց դէսը թութունի վար ու ցանը վեր ընկաւ, թէպէտ մինչև պատերազմը շատ նշանաւոր էր էդ երկիրը իր ավնիւ թութունով։ Հիմի Ամերիկայի պատերազմի վերջանալուց յետոյ, որովհետև չի ուզվի բանը, Ամերիկան էնքան թութուն չի կարող առաջացնել։ Էս պատճառով էլ Եւրոպացիքն իրանք ստիպվեցան մէկ քանի երկիրներումը ծաղկեցնել թութունի վար ու ցանը։ Մանաւանդ Ֆրանսիայումը, Գերմանիայումը, Բելգիայումը, Հոլանդիայումը և Մաջարստանումը առանձին ուշք դարձրին էս վերջին ժամանակներումս էդ բերքի վրայ։ Բելգիայի և Հոլանդիայի թութունի տերևները գովելի են մանաւանդ սիգարա շինելու համար, իսկ Ցաճկաստանի և Յունաստանի թութունը, որ թանկ ծախվում է և շատ էլ գործ է ածվում Ռուսաստանումը և մանաւանդ Կովկասի կողմը, պէտք է գալիս միայն կոտորած, չիբուխի և պապիրոսի համար։

Գանք հիմի մեր երկրին։ Կովկասի կողմերը թութունը բերում են Ցաճկաստանից, բայց թանկ լինելու պատճառով գործ է ածվում միայն բարձր և միջին կարգի ժողովրդի մէջը, բայց ստորին կարգ ժողովուրդը, խեղճերը ցուրկ են մնում էդ թութունից։ Մեր գիւղերումը թէպէտ ցանվում է մէկ տեսակ թութուն, բայց դա աւելի գիւղացուց գործ ածելու համար է մնում, քան թէ ծախելու, մանաւանդ որ դա միայն անուանումն է թութուն, իսկ ինքը բաւական վատ ու զզվելի խոտ է։ Մեր երկրումը դեռ ոչով փորձած չունէ թութունի լաւ տեսակների ցանելը, մանաւանդ կանոնաւոր կերպով. բացի Պ. Անանեանցը, որն որ Գուլթայիս քաղաքի մոտ իր Վարցիկս կոչված կալուածքումը ահա քանի տարի է ցանում է և մշակում է Ցաճկաստանից բերած թութունի սերմերը։ Ովոր էլել է Թիֆլիսի երկրագործական աշխարհահանդէսներումը, նա կարող էր նկատել, որ հանդէս գուրս բերած մեր

ւորներն են՝ ապրեշում, կոկոնը, ապրեշումի ճիճուի սերմը, բամբակը, բուրդը, ուի դեղը, սիմինդրը, ճրագուն, կաշիքը, արմաւենին, կաղնու (կակալի) ծառը և ուրիշ ապրանքներիցը դուրս է տարած Փոթուց սահմանիցը դուրս 1864 թուին —3,175,012 մանէթի և 1865 թուին— 4,035,294 մանէթի:

Օտար երկիրների բերքերիցը, գլխաւորապէս՝ չամիչ, շլոր, կաղին (տիկլ), ապրեշումներին, կաշիք, ծխախոտ և տորն ուղարկած է Փոթուց սահմանիցը դուրս 1864 թուին — 2,987 մանէթի, 1865 թուին 52,768 մանէթի:

Դուրս է տարած Փոթուց սահմանիցը դուրս ոսկի, սպիտակ փող և թուղթ փող 1864 թուին—15,565 մանէթի, 1865 թուին — 7,952 մանէթի:

Փոթուց ուղարկած է Պարսկաստան տրանզիտով 1864 թուին 160,659 մանէթի ապրանք 1865 թուին 302,892 մանէթի ապրանք:

Պարսկաստանից Փոթով ուղարկած է Եւրոպա տրանզիտով 1865 թուին-526,562 մանէթի ապրանք:

1864 թուին Փոթով սահմանիցը դուրս է գնացել 2,340 մարդ, 1865 թուին 2,074 մարդ:

1864 թուին օտար երկիրներից եկել է Փոթի 2,296 մարդ, 1865 թուին 1,727 մարդ:

Այս թուերը չեն կարող կատարեալ լինել, որովհետև Փոթով անցկացրած բոլոր ապրանքների մաքսը Փոթի չէ առնվում այլ մէկ քանի ապրանքների մաքսը առնվում է Թիֆլիս:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՐԱՐՄՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԷԿ ՔԱՆԻՍԸ:

Յունաստանումն էս վերջին ժամանակներումը Սօսօստենես անունով մէկ մարդ իր 40 ընկերներով աւազակութիւն էր անում: Սօսօստենեսը լուսաւորված և ջերմեռանդ մարդ էր, էնպէս որ հետը միշտ քահանայ էր մանածում: Որ կողմն էր կերթար նա իր ընկերներով, ամենքի սրտումը աւ ու դող էր դցում: Էս վերջին ժամանակներումը մէկ սաստիկ բան պատահեցաւ:

Մէկ գիւղումը խեղճ պառաւ կնիկ մեռաւ, բայց որովհետև նրա ազգականները կարողութիւն չունէին նրան թաղելու, էդ պատճառով մեռելը մնաց տանը մէկ քանի օր: Էն գիւղի տանուտէրն ու քահանան չէին ուզում թաղել մեռելը մինչև նրա տէրերը փող չէին ճարել: Սօսօստենեսը մէկ երեխայքն խմացաւ էս համբաւը: Գիշերն իր մէկ քանի մարդ-քերանցով և քահանայով գնաց էն գիւղը: Վեր առան մեռելը, տարան գերեզմանատուն և Սօսօստենեսը քահանային և գիւղի տանուտէրին հանձնելու փողերը տվեց մեռելի ազգականներին, հրամայելով բոլորին գերեզմանատուն գնալու՝ մեռելի վրայ կարդը կատարելու համար: Գիւղի քահանան և տանուտէրն էլ գնացին գերեզմանատուն: Թէպէտ միայն մէկ մեռել կար թաղելու, բայց Սօսօստենեսը երեք գերեզման էր փորել տըվել: Կարդը կատարեց գիւղի քահանան և մեռելը թաղեցին: Յետոյ բոլորն էլ ուզում էին յետ դառնալ, բայց Սօսօստենեսը չթողեց, հրամայեց գիւղի քահանային գիւղի տանուտէրի վրայ կատարել մեռելի կարդը և էս ասելով թրով խփեց ու վեր գցեց տանուտէրին: Քահանան ճարը կտրած կատարեց նրա հրամանը: Կարդը կատարեցին և տանուտէրին էլ թաղեցին երկրորդ գերեզմանումը: Սօսօստենեսը յետոյ հրամայեց իր քահանային գիւղի քահանայի վրայ կատարել մեռելի կարդը: Շուտով կարդը կատարվեցաւ և գիւղի քահանան ողջ ողջ զգեստաւորված թաղվեցաւ երրորդ գերեզմանումը:

«Бирж. вѣд.»

Պատմում են, որ մէկ ուրիշ տեղ քահանայի մէկը խեղճ ծեր մարդ է էլել թաղում: Ինչպէս խեղճ է էլել մեռելը, որ իր անկողնից աւելի ոչինչ չէ ունեցել: Քահանան կանգնել է, թէ մինչև փողերս չեք տալ, չեմ թաղի: Վերջը, որ մեռելի տիրոջ ճարը կտրվել է, խոստացել է տալ նրան թաղելուց յետոյ կողոպուտումն էն անկողինը:

Մէկ միւս տեղ էլ ուրիշ քահանայ մէկ պառաւ կնիկ է թաղում: Թաղելուց յետոյ անց է կենում հինգ տարի և էս քահանան բըռնում է մէկ անգամ էն մեռած պառաւի որդուն «թէ որդի, ես մէկ երազ եմ տեսել, պէտք է կատարես, թէ չէ մօրդ հոգու առաջ պարտական կմնաս: Լուսահոգին ինձ երազումս ասաց, թէ իբր քեզ մեռնելիս 60 մանէթ փող է պահ տալել ինձ տալու համար»: Էս տղան թէ, տէր տէր ինչ փող, ես ոչինչ չեմ գիտի, մօրս կարդերը բոլորն էլ իր ժամանակին կատարել եմ և նրա մէկ կոպէկն էլ չկայ ինձ մօտ: Շատ չէ, չէ տրաւ սա, բայց տէրտէրը համոզեց տրան, որ անպատճառ բերէ էն պահ տված փողերը, թէ չէ Աստուած կբարկանայ: Էս տղան էլ նոր էր մտել մէկ վաճառականի մօտ ծառայելու ամսենը 5 մանէթով: Պարտք արաւ խեղճը, ասում են, և տվեց 60 մ. քահանային, իբր թէ իր մօրս հոգին թափելու, բայց քիչ մնաց, որ իր հոգին դուրս եկաւ մինչև էն պարտքի տալը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն Մարտի 23:

Ղրիմ հարցնողը շատ կայ և սկսում է կամաց կամաց թանկանալ:

Լիվերպուլ Մարտի 23:

Էս մէկ շաբաթվայ մէջը 28,600 հակը բամբակ ծախվեցաւ: Հարցնողը սակաւ է: Բամբակի առուտուրը ծանր է:

Պետերբուրգ Մարտի 18:

Կուրսերը ցած ընկան:

Լոնդոնի վրայ 3 ամիս ժամանակով— $29^{15}/_{16}$ պենս:

Պարիժի վրայ 315 սանտիմ:

5% Լատարեյով առաջին փոխառութեանի տոմսակները ծախվում են $108\ ^{3}/_{4}$ մանեթ:

5% Լատարեյով երկրորդ փոխառութեանի տոմսակները բանկը ծախում է $105\ ^{1}/_{2}$ մանեթ:

Ոսկին . . . . 6 մ. 49 կ.

Օդեսա Մարտի 18:

Վեքսելի կուրսը Մարսելի վրայ—$316\ ^{1}/_{2}$ սանտիմ:

Թիֆլիս Ապրիլի 9:

Բամբակի մաղանդան անցեալ շաբաթից ցած ընկաւ: Էսօր փութը 10 մանէթով առնողներ չկան: Բամբակի առուտուր չկայ:

Բուրդը . . . . . —

Եավայի լեղակը 6 ամիս ժամանակով 155 մ.

Առուտուրը թոյլ:

Ինդիգոն շաքարը 9 մ. 60 կ. 10 մ.

Ռսինը . . . . . 11 մ.

Արծաթը 72 պրօբի . . 50 մ.

— —84 պրօբի . . . 260 մ.

Ոսկին. . . . . 6. մ. 70 կ.

дозволено цензурою
апрѣля 9 го 1866 г.

Հ. ԷՆԳԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:

Խմբագրող եւ Հրատարակիչ
Գ. Տէր Ադէքսանդրեանց: